



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2, Հեռ. 010 235-600, 010 597-520, Ֆաքս 233600, էլ.փոստ: info@msib.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 16

վարչական վարույթ հարուցելու մասին

21.04.2021թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավար Արմեն Կոտոյանս, քննելով «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետի պարտականությունները կատարող Գ.Սահակյանի 15.04.2021 թվականի զեկուցագիրը և կից նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Տեսչական մարմնի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 11-ի N79-Ա հրամանի հիման վրա Տեսչական մարմնի չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչության ծառայողները իրականացրել են համապատասխան ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ՍՊԸ-ում օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցը՝ 2 հատ վառելիքի լիցքավորման բաշխիչ աշտարակները յուրաքանչյուրը երկու ճկափողերով՝ ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանում ստուգաչափված չէին:

Հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ 09.03.2021թ. արձակվել է չափման միջոցների շահագործումն արգելելու մասին թիվ 7 կարգադրագիրը, սակայն «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Դանիելյանի կողմից չեն կատարվել կարգադրագրի պահանջները:

Նշված վարչական իրավախախտման համար պատասխանատու է «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Դանիելյանը /հասցե՝ ք. Երևան, Շինարարների 10/1 շ., բն. 104

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածով և 35-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Դանիելյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված սանկցիայի շրջանակում:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

3. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

Ղեկավար՝



Արմեն Կոտոյան

Հարգելի _____ «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի _____
տնտեսվարող սուբյեկտի անվանումը
ղեկավար (փոխարինող պաշտոնատար անձ) _____ Արթուր Դանիելյան _____
անուն, ազգանուն

հրավիրում ենք մասնակցել 09.03.2021թ. կայացված N7 կարգադրագրի պահանջները Ձեր կողմից չկատարելու կապապցությամբ 2021թ. ապրիլի 21-ին հարուցված թիվ 16 վարչական վարույթի քննությանը, որը տեղի է ունենալու <<19>> մայիսի 2021թ. ժամը 11-00-ին՝ շուկայի վերահսկողության տեսչական մարմնում (հասցեն՝ ք.Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ. 23-56-00):

Համաձայն <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի՝ գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Ծանուցագիրը հանձնեց՝

Տեսչական մարմնի ծառայող՝ _____
ստորագրություն

անուն, ազգանուն

Ծանուցագրի մեկ օրինակ ստացավ՝

Տնտեսվարող սուբյեկտի ղեկավար՝ _____
ստորագրություն

անուն, ազգանուն

ամսաթիվ